



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

-- հունիսի 2018 թվականի №---Ա
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի №254Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի մայիսի 18-ին «ԱՅ ԹԻ ՄԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 14-ի «ԱՅ ԹԻ ՄԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արսան-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №254Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Արսան-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0605 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0605 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը մինչև 2019 թվականի հոկտեմբերի 31-ը երկարաձգելու հայտով,

բ) «Արսան-1» արևային էլեկտրակայանի կառուցման գործարար ծրագրի համաձայն՝ մեկ տարի կառուցման ժամանակահատվածից մեկ ու կես ամիսը նախատեսված էր էլեկտրական ցանցին միանալու տեխնիկական պայմանների ստացման համար, 5 ամիսը՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության համար,

գ) Ընկերությունը 2018 թվականի մայիսի 2-ի №7/18 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել «Արսան-1» արևային էլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, որի համաձայն

փոփոխվել են էլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշները, մասնավորապես՝
ԼԷ №0605 լիցենզիայի պայմաններով ամրագրված արևային վահանակների քանակը և
հզորությունը,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները,
Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, այդ
թվում կարգի №3 հավելվածը՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե
փոխանցման կարգը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Վեց ամիս ժամկետով երկարաձգել ԼԷ №0605 լիցենզիայով ամրագրված «Արսան-1»
արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Հանձնաժողովի 2017
թվականի հունիսի 14-ի «ԱՅ ԹԻ ՄԻ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերությանը «Արսան-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի
(հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №254Ա որոշման
մեջ «մինչև 2018 թվականի հունիսի 14-ը» բառերը փոխարինելով «մինչև 2018
թվականի դեկտեմբերի 14-ը» բառերով:
2. ԼԷ №0605 լիցենզիայի պայմանների 7-րդ կետում «3000» թիվը փոխարինել «3960»
թվով, իսկ «330» թիվը՝ «275» թվով:
3. Ընկերությանը՝ ԼԷ №0605 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով
«Արսան-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը
երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
 - 1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017
թվականի մայիսի 11-ի №652-4725 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն
երաշխավորված երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ գումարից մեկ միլիոն
երկու հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր դրամը 900005028130
հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
 - 2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս
հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2019 թվականի
հունվարի 28-ը գործողության ժամկետով:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունիսի 14-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
-- հունիսի 2018թ.